

**«Ունիվերսալ» սպառողական վարկի համար Վարկառուից/Համավարկառուից և  
Գրավատուից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**

**Առանց գույքային ապահովման**

|  | Վարկառու/համավարկառու/երաշխավոր  |
|--|--|
| <b>Անհրաժեշտ փաստաթղթեր *</b>  |  |
| 1.   | Վարկի տրամադրման Դիմում-հայտ   |
| 2.   | Անձը հաստատող փաստաթուղթ - ՀՀ քաղաքացիների դեպքում՝ անձնագիր կամ նույնականացման քարտ, ոչ ՀՀ քաղաքացիների դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ**<br>ՀՀ քաղաքացու դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտ) կամ նույնականացման քարտ***, բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք:<br>***Նույնականացման քարտի ներկայացման դեպքում պարտադիր է հանրային ծառայությունների համարանիշի առկայությունը նույնականացման քարտի վրա: |
| 3.   | Եկամուտները հաստատող փաստաթղթեր**** կամ եկամուտները հաստատող փաստաթղթերի պատճեններ***** (բացառությամբ այն դեպքերի, երբ վարկառուն ստանում է աշխատավարձ Բանկում)   |
| <b>Եթե հաճախորդի եկամուտները ձևավորվում են ձեռնարկատիրական գործունեությունից</b> |  |
| 4.   | Հաճախորդի Եկամուտների գնահատման հաշվետվություն՝ կատարված ՓՄՁ վարկավորման բաժնի մասնագետի կողմից՝ նշված ԱԱՀ և ստորագրած, ներառյալ լուսանկարները և ներքոնշյալ փաստաթղթերը՝   |
| 4.1  | Հարկ վճարողի հերթական համարը հաստատող փաստաթուղթ (ՀՎՀՀ-ի պատճեն) (առկայության դեպքում)   |
| 4.2  | Պետական գրանցման վկայագիր/քաղվածք  |
| 4.3  | Գործունեության տվյալ տեսակով զբաղվելու թույլտվության փաստաթղթերը /եթ օրենսդրության համաձայն տվյալ գործունեության համար անհրաժեշտ է համապատասխան մարմինների կողմից հատուկ թույլտվություն/   |
| 4.4  | Առկայության դեպքում՝ վերջին 6 ամիսների եկամուտների և ծախսերի հաշվետվություններ (գրառումներ)  |
| 4.5  | Հաշվետու տարվա և դրան նախորդող տարվա նույն ժամանակահատվածի հարկային հաշվետվություններ  |
| 4.6  | Տնօրենի, հիմնադրի և այլ կապված անձանց անձը հաստատող փաստաթղթերի և հանրային ծառայությունների համարանիշների (սոցիալական քարտերի) պատճենները  |
| 4.7  | Կանոնադրության պատճեն և ռեեստրից տեղեկանք կանոնադրությունում կատարված վերջին փոփոխության վերաբերյալ  |
| 4.8  | Գործունեության վայրի սեփականության վկայական կամ վարձակալության պայմանագիր (առկայության դեպքում)  |
| 4.9  | Կազմակերպության տնօրենի և փոխկապակցված անձանց ԱՔՌԱ վարկային պատմության հարցման համաձայնագիր  |
| 5  | Անհրաժեշտության դեպքում Բանկի կողմից կարող են պահանջվել այլ փաստաթղթեր   |

\* Այն դեպքում երբ, հաճախորդը չի աշխատում պետք է ներկայացնի եկամուտը հավաստիացնող փաստաթղթեր՝ վարձակալական եկամուտը հավաստիացնող վարձակալության պայմանագիր, նաև սեփականության վկայականի պատճեն, թոշակի դեպքում (ՆԳՆ և այլն, բացառությամբ կենսաթոշակի)՝ թոշակի գրքույկ/տեղեկանք, գյուղատնտեսական եկամուտների դեպքում՝ կնիքով և ստորագրությամբ հաստատված (բացառությամբ գյուղապետի կողմից տեղեկանքի) տեղեկանքներ/պայմանագիր, որոնք հավաստիացնում են բերքի/ապրանքի հանձնումը կազմակերպություն, ձեռնարկատիրական եկամուտի դեպքում՝ պետական գրանցման վկայական, հիմնադիրների/տնօրենների անձնագիր և սոց. քարտ, պետ. ռեգիստրից տեղեկանք կանոնադրությունում կատարված վերջին փոփոխության և տնօրենների կազմի մասին, ՀՎՀՀ,

• Արտոնագրային վճարով աշխատողների ու Հաստատարված հարկով աշխատողների համար համապատասխան հարկատեսակով կատարված վերջին վճարման անդորրագիր (Արտոնագրային վճարով աշխատողների համար կարող է հանդես գալ հենց Արտոնագիրը) կամ

- Շահութահարկով աշխատողների համար – շահութահարկի վերջին հաշվետվությունը կամ
- ԱԶ-ների համար (որոնք չեն աշխատում Արտոնաբային վճարով, Հաստատագրված հարկով) շրջանառության հարկի վերջին հաշվետվությունը կամ Եկամտային հարկի կանխավճարների վճարման վերջին անդորրագիր:

Եթե հաճախորդը ունի այլ եկամուտներ, դրանք հաստատող այլ փաստաթղթեր:

**\*\*** Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել վարկառուի, համավարկառուի և գրավատուի միջև կապը հաստատող փաստաթղթեր:

. Անհրաժեշտության դեպքում կարող է պահանջվել վարկառուի զբաղեցրած պաշտոնը հաստատող փաստաթուղթ (զբաղեցրած պաշտոնի հետ կապված զեղչման պարագայում):

**\*\*** Տվյալ վարկային պրոդուկտի պայմաններով և սակագներով նախատեսված մասնավոր դեպքերում ոչ ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում գրանցում չունեցող ՀՀ քաղաքացու համար՝ կացության քարտ կամ ՀՀ Ոստիկանությունից գրանցման մասին տեղեկանք, իսկ դրանց բացակայության դեպքում՝ աշխատանքային պայմանագիր: Ուժային կառույցների աշխատակիցների դեպքում՝ հետևյալ փաստաթղթերից մեկը.

1) ՀՀ-ում գործառնա կողմից տրամադրված կոնկրետ հասցեում կամ գործառնա տարածքում բնակության իսկության վերաբերյալ տեղեկանք՝ բնակության ժամանակահատվածի նշումով, կամ

2) եկամուտների մասին տեղեկանք՝ ՀՀ-ում ծառայության սկզբի ամսաթվի նշումով, կամ

3) զինվորական գրքույկ զինվորական հաշվառման կանգնելու ամսաթվի նշումով և պայմանով, որ զինվորական մասը գտնվում է ՀՀ տարածքում:

**\*\*\*** Եթե հաճախորդը ներկայացնում է Բանկ միաժամանակ Օտարերկրյա պետության անձնագիր (ՌԴ քաղաքացիների համար Օտարերկրյա պետության անձնագրի տակ հասկացվում է նաև Ներքին անձնագիրը) և Կացության քարտ, ապա ԱԲՀ ՄՎՀ-ում վարկային հայտի մուտքագրման ժամանակ առաջնահերթությունը տրվում է Օտարերկրյա պետության անձնագրին (ՌԴ քաղաքացիների համար Օտարերկրյա պետության անձնագրի տակ հասկացվում է նաև Ներքին անձնագիրը):

Տվյալ դրույթից բացառություն են կազմում այն երկրների քաղաքացիները, որոնց վարկ տրամադրելու համար Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված է այլ ընթացակարգ:

**\*\*\*\*** Հաճախորդի կողմից եկամուտները հաստատող փաստաթղթի պատճենը տրամադրվում է միայն այն դեպքում, եթե վերջին օրացուցային ամսվա ընթացքում հաճախորդը ձևակերպել է այլ վարկ Բանկում, որի ժամանակ տրամադրվել է եկամուտների վերաբերյալ տեղեկանքի օրիգինալը, ընդ որում փաստաթղթի պատճենի վրա պարտադիր պետք է առկա լինի մասնաճյուղի աշխատակցի կողմից գրառում այն մասին, թե որ վարկային փաթեթում է գտնվում փաստաթղթի օրիգինալը (վարկային պայմանագրի համարի նշումով):

**\*\*\*\*\*** Աշխատանքի վայրից տեղեկանքի փոխարինող փաստաթուղթ կարող է հանդիսանալ վերջին 4 ամսիների համար հաճախորդի աշխատավարձային հաշվի քաղվածքը՝ աշխատավարձային մուտքերի նշմամբ: